


Հաստատված է  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի  
«15» դեկտեմբերի 2021 թ. թիվ 163 նիստում  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն  
Սարգսյան Ա. Սարգսյան



## Հաշվետվություն Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2021թ.-ի

2021թ. հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքներն ու միջոցառումները.

Իրականացվել է պաշտոնական կայքի (<https://www.isec.am>) սպասարկում, կայքի բովանդակային պարբերական թարմացումներ և ավելացումներ:

### ԳԿՄԿ կայքերի մասին թվական տվյալներ

	2020	2021
Կենտրոնի պաշտոնական կայքի այցելությունների քանակ	50959	58523
Կենտրոնի դոմեյնում գործող կայքերի քանակը	5	5
Կենտրոնի պաշտոնական կայքում տեղադրված տարեկան նորությունների և հայտարարությունների թիվը (հայերեն, ռուսերեն, անգլերեն)	77	137
ՀՀ ԳԱԱ դոմենում գործող կայքերի թիվը	2	2

Թարմացվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում տեղադրված հեռավար ուսուցման հարթակի (կայք՝ <https://vle.sci.am/>) ծրագրային ապահովումները, վերազինվել անհրաժեշտ նոր ծրագրային փաթեթներով:

Հարթակի անվտանգության և անխափան աշխատանքի համար կատարվել են անհրաժեշտ ընթացիկ սպասարկումներ՝ արխիվացվել են տվյալների բազաները, սերվերային համակարգը, կատարվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլն:

Թարմացվել է հեռակոնֆերանսների կազմակերպման համար նախատեսված սերվերը, նորացվել են անվտանգության և ծրագրային անհրաժեշտ փաթեթները:

Համավարակի հրամայականով պայմանավորված ուսումնական գործընթացը պարբերաբար կազմակերպվել է ԳԿՄԿ հեռավար հարթակում՝ լիարժեք ապահովվել և ապահովվում է Կենտրոնի բնականոն ուսումնական պրոցեսը: Անկախ հեռավար հարթակում դասընթացի մշտական անցկացումից, ապահովվել է բոլոր մասնագիտությունների առարկայական նյութերի տեղադրումը հարթակում: Հեռավար ուսուցումը արդյունավետ կազմակերպելու նպատակով ըստ անհրաժեշտության աշխատակիցներին տրամադրվել են համակարգիչներ:

Թարմացվել են էլ. փոստ և հեռաուսուցման հարթակ մուտք գործելու և օգտվելու ուղեցույցները:

Ըստ անհրաժեշտության կազմակերպվել են տեսականորջներ գործընկեր կազմակերպությունների հետ: Բաժինն սպասարկել և ապահովել է աշխատակիցների աշխատանքային առցանց և այլ հանդիպումների մասնակցությունը:

Իրականացվել է համատեղ օգտագործման հեռաուսուցման սերվերի ընթացիկ սպասարկում և թարմացում (<https://online.isec.am/>): Բաժնի կողմից տրամադրվել է անհրաժեշտ տեխնիկական խորհրդատվություն դասախոսներին և ուսանողներին՝ հեռավար հարթակից օգտվելու վերաբերյալ:

Թարմացվել է պահոցային համակարգի ծրագրային ապահովումը (ASUSTOR):

Կատարվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատանքային համակարգիչների պրոֆիլակտիկ ստուգումներ, առաջացած ծրագրային խնդիրների վերացում, ցանցային և համալրող սարքավորումների (տպիչներ, սկաներներ և այլն) վերանորոգում ու կարգաբերում և այլ խնդիրների լուծման ուղղությամբ տարվել աշխատանքներ, աշխատակիցներին ցուցաբերվել է տեխնիկական և մասնագիտական աջակցություն: Բացվել և տրամադրվել են աշխատանքային, ուսանողական փոստային հաշիվներ: Աշխատանքային վիճակի են բերվել հոսանքի անխափան սնուցման 5 սարք՝ UPS:

Իրականացվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ լսարանային համակարգիչների ծրագրային փաթեթների, ինչպես նաև հակավիրուսային ծրագրերի թարմացումներ և ստուգումներ:

Կարգաբերվել և շահագործման են հանձնվել 6 նոր դյուրակիր համակարգիչ: 17 ժամանակակից համակարգչով ստեղծվել է համակարգչային լսարան և ևս մեկ լսարան վերակազմավորվել է համակարգչային լսարանի՝ 9 համակարգչով: 3 բազմաֆունկցիոնալ տպիչները բերվել են աշխատանքային վիճակի, տրամադրվել աշխատակիցներին օգտագործման:

1 լսարանում սովորական պրոյեկտորը փոխարինվել է ավելի նոր պրոյեկտորով: Փոխարինվել է նաև պատի էկրանը պրոյեկտորին համապատասխան ինտերակտիվ էկրանով:

